Հավելված 2

2023 թ. «02» «28»-ին

կնքված N *ԴՏՊ-1160-11009/ԱՐՄ-1/23* պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն N_11_**

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում» |
| **Դրամաշնորհի N** | ԴՏՊ-1160-11009/ԱՐՄ-1/23 |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ ԱՍՀՆ |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 14.02.2023-31.12.2023 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.07.2023-30.09.2023 |
| **Ներկայացման օր** | 05.10.2023 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Նաիրա Առաքելյան,<br>ՀԿ Նախագահ |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- **Շահառուների կարիքների և կարողությունների գնահատում**. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 1 շահառուի կարիքի գնահատում համապատասխան մեթոդաբանությամբ, որի արդյունքում ստացել ենք հստակ նկարագիր շահառուի կարիքների վերաբերյալ: Առկա են նաև նախորդ 8 շահառուների գնահատված կարիքները, որոնք ըստ անհրաժեշտության վերանայվում են:
- **Սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրի մշակում.** Գնահատման արդյունքում սոց.աշխատողի գլխավորությամբ թիմի կողմից մշակվել է շահառուի անհատական սոցիալական ծրագիր, որի արդյունքում շահառուի համար արդեն առկա է հստակ ծրագիր/պլան, որի հիման վրա մատուցվում են անհրաժեշտ պարապունքները և ծառայությունները:
- **Ամենօրյա պարապմունքների և ծառայությունների մատուցում.** Ըստ հաստատված ժամանակացույցի և անհատական զարգացման պլանների՝ շահառուներին մատուցվում է անհատական և խմբային անհրաժեշտ սոցիալական ծառայություններ, սոցիալական խորհրդատվություն, իրազեկման աշխատանքներ, համակարգչային դասընթացներ: Իրականացվել է անհատական հանդիպում մի քանի ծնողների հետ: Կատարվել է խմբային աշխատանք, որը նպաստել է շահառուների շփման,

հաղորդակցման և  համագործակցության հմտությունների զարգացմանը: Մի քանի շահառու շարունակում են միասին սովորել և հմտանալ շախմատ խաղալով: Զարգացնում են մաթեմատիկական գիտելիքները, 2-ի բազմապատկում, զույգ-կենտ հաշիվ, տասնյակներով գումարում, հանում: Նոր շահառուի հետ աշխատանքներն իրականացվում են «Արևածագ» վերականգնողական կենտրոնում, որտեղ ուսուցանվում և զարգացնում են սոցիալ-կենցաղային հմտությունները: Աշխատանքի նպատակը եղել է ձեռնափայտի հետ աշխատանք, մոտորիկայի շուրջ, ինտելեկտուալ զարգացման աշխատանքներ: Աշխատանքներ ենք կատարել ֆիզիկական կուլտուրայի շուրջ: Շահառուներից մեկը անհատական խորհրդատվությունների, հոգեբանի հետ աշխատանքից հետո ընդունվել է Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի մագիստրատուրա՝ տիֆլոմանկավարժություն բաժինը: Տիֆլոմանկավարժը շահառուի հետ միասին այցելել է համալսարան, ծանոթացրել համալսարանի տեղանքին, համալսարանի ներսի մատչելիությանը, առկա խոչընդոտներին, ու դրանց հաղթահարելու հնարավոր ուղիներին: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ:  Տիֆլոմանակավարժը շահառուի խնդրանքով այցելել են Հայ Առաքելական Եկեղեցի, մասնակցել են պատարագի: Արդյունավետ և հետաքրքիր աշխատանքներ են կատարվել նոր ընդունված շահառուի հետ՝ սպիտակ ձեռնափայտով տարածության մեջ կողմնորոշվելուն ուղղված աշխատանքներ, ֆիզիկական պատրաստվածությանն ուղղված խաղ-վարժություններ, մաթեմատիկական հմտությունների/թիվ-հաշիվ/ ամրապնդում: Կատարվել է ֆիզոթերապևտի կոնսուլտացիա «Արևածագ» երեխաների աջակցության վերականգնողական կենտրոնում՝ ֆիզիոթերապետի մոտ և կազմակերպվել է խորհրդակցություն շահառուի ընտանիքի անդամի հետ, տրվել է կոնկրետ վարժությունների օրինակներ, որը կկանխարգելի շահառուի կեցվածքի հետ կապված հետագա բարդությունները: Աշխատանքներ կատարվեց իր էլեկտրոնային հարթակից

օգտվելու վերաբերյալ: Մյուս շահառուի հետ իրականացվել է իրեն անհանգստացնող կենցաղային հարցերը ինքնուրույն հոգալու աշխատանքներ սպիտակ ձեռնափայտի օգնությամբ:

Շարունակվում են ռուսերեն և անգլերեն տերմինների բացատրություններն ու հանձնարարականները: Շարունակվում են էկրանի ընթերցող ձայնային ծրագրերի միջոցով սմարթֆոններից և համակարգիչներից օգտվելու հմտությունների ուսուցում: Շահառուներից մի քանիսի հետ դեռևս ամրապնդվում է windows համակարգում նավարկման և խմբագրման ռեժիմների մանրամասն ուսումնասիրումը և յուրացումը: Շահառուները շարունակում են սովորել հատուկ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված հավելվածներ, որոնք օգնում են ինքնուրույն, անկախ կյանք վարելուն, մասնավորապես CASH READER (հայկական թղթադրամները ճանաչելու) հավելվածը: Սովորում են արհեստական բանականության հետ CHAT GPT, ուսումնասիրում և սովորում են տեղորոշման ծրագրերը, սոցիալական ցանցերը: Բացի այդ իրականացվել է նաև հայկական առաջին սոցիալ-կրթական տեղեկատվական հարթակի ուսուցում, ծանոթացում tiflotech.am կայքին, նոր ծրագրերի տեղակայում և հեռացում: Սովորում են ինչպես օգտվել էլեկտրոնային հաշվիչներից, ինչպես կարելի է տեքստային ֆայլերը և տեքստերը վերածել ձայնային ֆայլերի, տարբեր կայքերի նավարկում:

Շահառուների համար կատարվել է նաև Balabolka ծրագրի ուսուցում, որը հնարավորություն է տալիս տեքստային ֆայլերը բարձրաձայն ընթերցել, խմբագրել, պատրաստել ձայնային ֆայլ, թարգմանել այլ լեզուներով:

Ուսուցանվել է նաև ABBYY FineReader, որը հնարավորություն է տալիս աշխատել բոլոր տեսակի սկանավորման սարքավորումներից, արագ սկանավորել և արտահանել տեքստը այլ ֆորմատներից, ինչպիսիք են նկարները և սկանավորած ֆայլերը: Ուսուցանվել է նաև էլեկտրոնային փոստից օգտվել, ընդունել և գրել նամակներ, վերականգնել օկտահաշիվներ,

| |
|---|
| փոխել գաղտնաբառեր, Google ծառայություններ, մասնավորապես Classroom, Google Docs Google Диск: |

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Ծրագրային բոլոր գործողությունները հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են համաձայն աշխատանքային պլանի:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ծրագրային նախատեսված արդյունքները հետևյալ չափով.

- Ամսական՝ 8 պարապունք, ընդամենը՝ 24 պարապմունք
- ՏՀՏ դասընթացներ՝ շաբաթական 2 պարապմունք, ընդամենը՝ 24 պարապմունք
- Սպիտակ ձեռնափայտի ուսուցում՝ շաբաթական 2 պարապմունք, ընդամենը՝ 24 պարապմունք
- Սոցիալական խորհրդատվություն՝ ամսական 2 հանդիպում, ընդամենը՝ 6 հանդիպում

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվություն է դրվել ԱԶԿ ՀԿ-ի սոցիալական էջում/ |

Digitally signed by ARAKELYAN NAIRA 5114670166
Date: 2023.10.05 21:05:11 AMT

https://www.facebook.com/armavirdc/posts/pfbid0ostYLcA7Jp6L3RtJokYxQ8fzUvud1w6jgqCePiiw1F8JCEDkT1y8q8yCatvxQbUhl

https://shorturl.at/fyEPT

https://www.facebook.com/reel/2484332025073105

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի իրականացման խոչընդոտներ չեն գնահատվել:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Շահառուների ցուցակը կցված է սույն հաշվետվությանը:

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածում նախատեսված գործողություններն են.

- Շահառուների սոցիալ-հոգեբանական բնույթի խոչընդոտները հաղթահարելուն ուղղված աշխատանքներ
- Իրազեկման աշխատանքներ
- Շահառուների՝ սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ
- Շահառուների՝ ինքնասպասարկման, կենցաղավարման հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ
- Սպիտակ ձեռնափայտի միջոցով այց ժամանցային վայրեր և սննդի կետեր
- Անհատական մոդուլների ժամանակացույցում առցանց փաթեթների ծառայությունների ուսուցում, օրինակ՝ Google, Yandex
- Այցելություն մշակույթի տուն, թատրոնի դիտում տիֆլոմեկնաբանությամբ:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

- Ծրագրի շահառուներից բրայլյան համակարգին տիրապետող շահառուն, շարունակում է իր գիտելիքները և փորձը մեր աջակցությամբ փոխանցել կրտսեր ընկերոջը, որն էլ ապահովում է երկու շահառուների շփման հմտությունների զարգացմանը և փոխհամագործակցության մթնոլորտի ձևավորմանը:
- «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Համագործակցություն հանուն կայուն համայնքների» ծրագրի շրջանակներում մի քանի շահառուների տրամադրեց սննդի և հիգիենայի փաթեթներ:
- Մեկ շահառուի համար կազմակերպվել է հանդիպում հոգեբանի հետ «Արևածագ» վերականգնողական կենտրոնում, շահառուն ստացել է խորհրդատվություն:
- Շահառուներից մի քանիսը «Արմավիրի զարգացման կենտրոն»-ում մասնակցել են երկու դասընթացի, որտեղ խոսվել է գյուղատնտեսության ոլորտում բնապահպանական խնդիրներից և սոցիալական ներառում և գենդերային հավասարություն թեմաներից:
- Ծրագրի տեսանելիությունը, իրազեկվացությունը բարձրացնելու նպատակով Հանրային ռադիոն հաղորդում պատրաստեց ծրագրի մասին: Ծրագրի շահառուները զրուցեցին ծրագրի արդյունքների մասին, խոսեցին ծրագրում գրանցած իրենց հաջողությունների, տպավորությունների և ապրումների մասին: Այն հասանելի է հետևյալ հղումով. https://shorturl.at/fyEPT